

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ
ՀԾԾՀ ԳԱ ակադեմիկոս

Գար-, -գար: Այս արմատը, որ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 1, էջ 520)¹ դասում է արմատական բառերի շարքը և մեկնում որպես «ցավ, հիվանդություն», հայերենի վերաբերյալ շատ աշխատություններում դիտվում է որպես ածանց: Գրարարի անվանական ածանցներին նվիրված իր աշխատության մեջ Զ. Գրեպինը այն բխեցնում է միջին պարսկերեն -gar ածանցից՝ բերելով tuwan «հզորություն, ուժ»—tuwanagar «հարուստ» օրինակը²: Սակայն, նախ՝ միջին պարսկական ածանցը չունի հայերենում պահպանված իմաստը, երկրորդ՝ այն հայերենում առկա է ավելի վաղ -կար ձևով (մ. պրսկ. -gar<-kara- «անող» հմտ. վնասակար), երրորդ՝ գրաբարում գար-ը իրոք հանդես է գալիս ոչ միայն վերջաժանցակերպի արժեքով (աչագար, գլխագար, լեզուագար, խելագար, միջագար «մեջը փչացած», ցաւագար), այլև որպես բայահիմք (գարիլ ցցավել, ցավ զգալ)՝ նաև գոյականական գործածությամբ (անգար «գլխի կեսի ցավ, միգրեն»):

Մեր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ (Երևան, 1987, էջ 520) մենք գար-ի աղբյուրը համարել էինք իրանական gar- արմատը, որ հանգես է գալիս ավ. garənu- «քոս», իտալ. ggariva «դժբախտություն», մ. պ. gar, պ. gar «քոս» բառերի մեջ և ղուգահեռ ունի հ. հնդ. gara- «մի հիվանդություն» բառի մեջ. այս ստուգաբանությունը հենվում է Հ. Աճառյանի ավելի վաղ հայտնած կարծիքի վրա (ՀԱԲ, 1, էջ 521)՝ խոտան-սակերենի և հին հնդկերենի տվյալների հավելումով: Սակայն, ինչպես նշում է Աճառյանը, իրանական բառերի իմաստը ղգալիորեն տարբեր է հայերենի համար վերականգնվող իմաստից:

Այժմ մենք կարող ենք նշել իրանական մի բառ, որի տարբերակներից մեկը (պարթևականը) կարող էր լինել հայերեն բառի աղբյուրը: Այդ բառը ավեստերեն gada- «փչացում, վնաս, աղետ» բառն է, որ ղուգահեռ ունի հ. հնդկ. gada- «հիվանդություն» բառի մեջ³: Իրանական ծ-ն հայերենում սովորաբար արտացոլվում է որպես ր. հմտ. պրթ. spaðapat>սպարապետ, awðenak>աւրիւնակ (օրինակ) և այլն:

Եղէզ (եղեզ, ըղէզ): Այս բառը հանդիպում է անթվական մի արձանագրության մեջ և, ըստ Հ. Աճառյանի (ՀԱԲ, 2, էջ 19), նշանակում է «գետին, որ քրտինքի նման ջուր է թորում»։ Հավանաբար նույնն է Բուլանըխի խոսվածքի աղէզ «գետափ, ծովափ» բառի հետ, որից կազմված է աղբզգաշ «աղեղնավոր փորված փոսիկ, ուր ջուրը քրտինքի նման սուզվելով՝ աղբյուր է առաջացնում» բառը:

Ս. Ավագյանը արձանագրության հավանական ժամանակը համարում է XIII դ. վերջը և բերում այդ բառի մի այլ վկայություն 1350 թ. մի արձանա-

¹ Այստեղ և հետագայում ՀԱԲ հապավումը նշանակում է՝ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 2-րդ հրատ., հ. 1—4, Երևան, 1971—1979:

² J. A. C. Greppin, Classical Armenian nominal suffixes, Wien, 1975, P. 23.

³ Ch. Bartholomae, Altiranisches Wörterbuch, 2. Aufl. Berlin, 1961, S. 499: հմտ. նաև M. Mayrhofer, Kurzgefasstes etymologisches Wörterbuch des Altindischen, 1, Heidelberg, 1955, S. 320.

գրության մեջ՝ ըղիգ ձևով⁴։ Նա միաժամանակ ավելի հավանական է համարում բառի՝ Յ. Կարստի անտիպ բառարանում տրված «ամայի վայր, անմշակ հողամաս, կորդ, խոպան» մեկնությունը։ Սակայն Հ. Աճառյանի մեկնությունը հենվում է բարբառային կենդանի խոսքի վրա, և եթե բերված բարբառային բառը նույնիսկ տարբեր է արձանագրություններում հիշատակված բառից, միևնույն է, կարիք է զգում ստուգաբանության։

Եղեգ բառի աղբյուրը կարող է լինել հնդեվրոպական *(s)lei- արմատի *g'h- ածականով ձևը՝ *(s) lei-g'h- > եղեգ. ճիշտ է, *g'h- ածականը այլուր չի հանդիպում, բայց կա *g'- ածականով ձև, որին պատկանող սլավոնական ձևերը հավասարապես կարող էին գալ *g'h-ով ձևից. Յ. Պոկոռնին նշված արմատի համար վերականգնում է հայերեն բառին շատ մոտ իմաստ՝ «թացությունից (խոնավությունից) լպրծուն դարձած գետին»։ սահել. կաշուն, մածուցիկ», թեև *sleig'-ի ածանցյալները իմաստով փոքր-ինչ տարբեր են՝ հ. իսլ. slíkr «հարթ», մ. ն. գերմ. slík «տիղմ», ռուս. слякы «լպրծուն» և այլն. այս արմատի այլ ածականներով ձևերից են հայ. լպիծ, լպրծում, լատ. līmus «տիղմ, ցեխ. կեղտ» և հ. վ. գերմ. leim «կավ» և այլն։

Կղզի։ V դարից մատենագրության մեջ ավանդված և բարբառներում կղզի, կղզի ձևերով հանդիպող այս բառի համար տարածված է Հ. Աճառյանի ստուգաբանությունը, որ հենվում է ն. Մառի բերած սեմական զուգահեռների վրա։ Ն. Մառը բխեցնում է, այսպես կոչված հաբեթական *kzr արմատից՝ նշելով սեմական *gzr «կղզի» արմատը և վրաց. კოიჯული «կղզի» բառը։

Հ. Աճառյանը (ՀԱԲ, 2, էջ 603) համարում է ասուրական (ակկադական) փոխառություն՝ նկատի ունենալով, որ այդ փոխառություններում g-ն փոխվում է կ-ի, և միաժամանակ z-ի ու r-ի դրափոխության համար բերելով Մշո բարբառի կղզի ձևը⁵։ Սրանով իսկ նա մերժում է հնդեվրոպական ձևերով բացատրելու պեղերսենյան և պատրուբանյանական փորձերը՝ ըն-կղմել և ըն-կղմուլ բայերի հիման վրա (որպես «ծովում գտնվող», ինչպես լատ. in-sula)։

Հ. Աճառյանի ստուգաբանությունը ունի մի քանի վիճելի կողմեր. 1) ակկադերենում ընդհանրապես այդպիսի gzt արմատ չի հայտնաբերված, և ստուգաբանությունը հենվում է միայն այլ զուգահեռների վրա. 2) բավարար չափով հիմնավորված չէ r > (l >) ղ անցման և սրա ու q-ի (z) դրափոխության վերաբերյալ ենթադրությունը. 3) անբացատրելի է թողնվում ՝ի վերջնահնչյունը։ Մենք այժմ հնարավոր ենք համարում վերադառնալու կղզի բառի հնդեվրոպական ստուգաբանությանը, սակայն նշելով Հ. Պեղերսենի և Պ. Պատրուբանյանի ենթադրածից տարբեր աղբյուր։ Կղզի բառի աղբյուր կարող էր լինել *gel- «գնդվել. կլոր բան, գունդ» արմատի *g'h- ածականով ձևը՝ *gelg'hilo- > կղզի։ Ինչպես եղեգ-ի դեպքում, այստեղ նույնպես ունենք միայն ոչ շրնչեղ ածականով ձևեր, բայց հայերենի դեպքում կարելի է ենթադրել շնչեղ ձայնեղով նախաձև։ Մերձավոր հ.-հ. *gelg'-և, սահող ձայնդարձով, *gleg'- ձևերից են ծագում լեհ. glaz «ժայռ. գլաժայռ, գլաքար, գետաքար», հ. իսլ. kleggi «խոտի դեզ», մ. վ. գերմ. klinge «խճոտ ծանծաղուտ գետի մեջ», շվեդ. clunga «հոծ կույտ, զանգված» և այլն։

Կոկով։ Հայ մատենագրության մեջ հոգնակի ձևով հազվադեպ հանդիպող կոկովանք բառը նշանակում է «ամորձիք» և այդ իմաստով բավականաչափ

⁴ Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, Սրբան, 1978, էջ 74։

⁵ Н. Я. Марр, Основные таблицы к грамматике древнегрузинского языка, СПб., 1908, с. 9.

⁶ Հ. Աճառյանի ստուգաբանությունն ընդունված է նաև մեր. օձալոգ, լեզվի՝ կատմություն. նախագրային ժամանակաշրջան աշխատության մեջ (էջ 470)։

տարածված է արևմտյան բարբառներում: 2. Աճառյանը (ՀԱԲ, 2, էջ 618) սրա հետ նույնացնում է հին *կոկոլ ձևից ծագող նորնախիջևանյան գոգո բառը՝ նույն նշանակությամբ: այլ բարբառներում այն նշանակում է կլոր, գրնդած առարկաներ՝ «ձու», «ընկույզ» և այլն, ընդ որում Խարբերում պահանջվել է սկզբնական նշանակությունը «կլոր, գնդած»: Հիշատակված է նաև «ռամկական» կոկոլին «ամորձիք» բառը:

Ստուգաբանության որևէ փորձ չի արվել:

Կոկոլ բառը ամենայն հավանականությամբ ներկայացնում է հ.-հ. *geu- «թեքել, ծռել, կամար կազմել» արմատի կրկնավորը. հմմտ. մ. վ. գերմ. kugel(e), գերմ. Kugel «գնդակ», բրբռ. Kogel «կլորած և լեռնագագաթ», նորվ. kjuka «գողձ», լիտվ. gugl «կոճակ, սապատ, բլուր», ռուս. гу́гль «ուռուցք, ելունդ, խուլ» և այլն (*-g- աճականով):

Հնդեվրոպական *geu- արմատից ծագող բառերը մասամբ խառնվել են *geng-/gong- «գունդ, գողձ» արմատից ծագող բառերի հետ⁷:

Համոգել: Հայ մատենագրության մեջ V դարից ավանդված և բարբառներում ու գրական լեզվում գործածվող այս բառը տարբեր հեղինակների կողմից փոխառություն է համարվել պարսկերեն amūxtan «սովորեցնել, ուսուցանել» բայի ներկայի հիմքի amūz ձևից: 2. Աճառյանը (ՀԱԲ, 3, էջ 28) չի բնորոշում այս ստուգաբանությունը՝ նկատի ունենալով նախ՝ իմաստային տարբերությունը և երկրորդ՝ պարսկերեն բայի ներկայի հիմքի «պահպանված» amōc ձևի առկայությունը, որ պիտի տար *ամունել և ոչ համոգել: Սակայն այս առարկությունները անբավարար են: Նախ՝ պարսկերեն բայի «սովորեցնել, ուսուցանել, խրատել, ընտելացնել» իմաստներից դժվար չէր անցումը դեպի «համոզել» իմաստը, եթե, իհարկե, ենթադրենք, որ հայերեն բայի իրանական անմիջական աղբյուրը չունենալով այդ լրացուցիչ իմաստը. հմմտ. լատ. suadeo «խորհուրդ տալ- համոզել», երկրորդ՝ միջին պարսկերեն amoxtan բալը ուներ նաև գուգահեռ հ-ով ձև՝ hamōxtan⁸. երրորդ՝ միջին պարսկերենում ներկայի հիմքի hamōc ձևի փոխարեն արդեն առկա է Ը-ի դիմաց Z-ով ձև⁹, որ կարող էր լինել հայերենի աղբյուրը. սասանյան շրջանում գրված «Arda Wiraz Namag»-ում բայն ունի ham(m)ōxtan, ներկայի հիմքում՝ ham(m)ōz (պատճառական՝ ham(m)ozanīdan) ձևերը¹⁰. չորրորդ՝ հայերեն համոգել բայի կողքին առկա է նաև համոզակել բարատատու, համոզող» անվանական ձևը, որի կերպով իրանական ծագում ունի (հմմտ. խոհակեր «խոհարար») և զալիս է hamozkār ձևից (հմմտ. պարսկերեն amuzkār «ուսուցիչ»):

Հույիտ: Այս բառը հանդիպում է հայ մատենագրության մեջ V դ. սկսած և նշանակում է «միմոս, խեղկատակ. թուլամորթ, մեղկ»: Նախնական իմաստի բացահայտմանը նպաստում են ածանցյալ հոգատանք «պչրանք, պճնանք. կցկցանք, կեղծիք. միմոսություն», հոգատեալ «կեղծված. ծածկված»: Հանդիպում է նաև առանց տ-ի՝ հյիտ «ծաղրածու, միմոս», հոգատանք «պաճուճանք. միմոսություն», հոգտիլ «պաճուճվել, զարդարվել. միմոսություն անել»: Երեմիայի բառարանում առկա են՝ հոգտել (փոխանակ հոգտել-ի) «պաճուճել (այլ ձևագրերում՝ պատճառել) կամ խաբել», հոգտել «պատրաստել կամ

⁷ J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, 1. Bern-München, 1959, S. 379.

⁸ Հմմտ. H. S. Nyberg, Hilfsbuch des Pehlevi, 2, Uppsala, 1931, S. 9.

⁹ Սասանյան շրջանում և նույնիսկ ավելի վաղ միջաշխավորային և հեռաշխավորային Ը-ն փոխվել էր Z-ի, ինչպես ցույց է տալիս մանիքեական գրությունը. հմմտ. Основы иранского языкознания. Среднеиранские языки, М., 1981, с. 34.

¹⁰ «Arda Wiraz Namag», published by F. Vahman, London, 1986, p. 267:

պատճառել կամ այլայլել» (ձեռագրերում՝ նաև «մերձիլ կամ պատրաստել...»)¹¹:

Գ. Ղափանցյանը իր աշխատություններում փորձում է բխեցնել փոքրասիական Hepit (Hepat, Hipta) աստվածուհու անունից¹²: Չի կարելի լուրջ ընդունել ռուս հայկագետի բառգրքի» փորձը հիմն լծորդություն կապելու ծպախի, ծպախի ձևերի հետ: Լ. Աճառյանը (ՀԱԲ, 3, էջ 129) հնարավոր է համարում հապիտ-ը մեկնել որպես կրկնավոր ձև:

Անհավանական է հեթագրել, որ բառիս աղբյուրը պարթևական herpat (hylpt) (<ehrpāt), ուշ՝ herbed «քրմական մի կոչում» բառն է (հմմտ. ավ. aēura-pati- «(կրոնական) գաղտնի պետ»):

Մամշել: Բարբառային այս բառը նշանակում է «խոնավությունից բորբոսնել»։ որպես աղբյուր Ս. Ամատունին նշում է Վաղարշապատի և Ալաշկերտի խոսվածքները¹³: Իմաստով սրան մոտ է մեր բառարաններում շարձանագրված բարբառային մամնել բառը, որի հիմքն է գրական լեզվին հատուկ մամուռ բառը: Մամշել բառի համար ևս կարելի է վերականգնել *մամուշ-հիմքը: Մամուռ բառի համար լայնորեն տարածված է Ս. Բուզգեի ստուգաբանությունը, որ, սակայն, կասկածելի է համարում Լ. Աճառյանը (ՀԱԲ, 3, էջ 244): Ըստ Ս. Բուզգեի՝ մամուռ բառը հ.-հ. *musr-ի կրկնավոր ձևն է և ծագում է հ.-հ. *meu- «խոնավ, թաց, բորբոսնած. կեղտոտ հեղուկ, կեղտոտել» արմատի *s- ածականով ձևից, որից ծագում են նաև հ. վ. գերմ., հ. անգլ. mos «մամուռ. ճահիճ», լիավ. mūsos, mūsai «բորբոս», հ. սլավ. мѣхъ, ուս. мох «մամուռ», բուլղ. мухъл «բորբոս» բառերը: Յ. Պոկորնին տալիս է *memus-ro- նախաձևը¹⁴: որ, սակայն, չէր կարող տալ մամուռ. այս պատճառով էլ մենք ենթադրում ենք թուլացած *h ձայնավորով՝ memus-ro- նախաձև. հնարավոր է ենթադրել նաև ուշ կազմություն ըստ հղած կաղապարի (հմմտ. կարկուտ <*gə-grōdo-): Այս նույն արմատից է ծագում, բայց առանց ածականի, հայ. մաւր ստիղմ. ճահիճ բառը:

Ինչ վերաբերում է ուշ հերթագայությանը, ապա այն հայտնի է նաև այլ դեպքերից: Հայերենում *rs կապակցությունը կարող է տալ երկու արտացոլում՝ ո կամ rշ (հմմտ. բառամ—բարշամ), ընդ որում r-ն շ-ից առաջ գտնված դիրքում հեշտությամբ ընկնում է. հմմտ. խարշել > խաշել, բարշել > բաշել: Այսպիսի անկում տեղի է ունեցել նաև մաշ (մաշ-ել < *մարշել) հիմքում, որ ծագում է *mš-s- ձևից՝ հ.-հ. *mer- «տորոել, մանրել» արմատից: Համատիպ հարաբերություն ենք տեսնում մենք նաև մոռ և մոշ, քուռ «այտ» և քուշ բառերի միջև, որոնց համար ենթադրելի են *mor-s- (*mor- արմատից, որտեղից մոռ, մարի) և *tu-r-s- նախաձևերը:

Մաշոնց: Հայ գրերի հիմնադիր Մաշոնցի անունը հավաստի ստուգաբանություն չունի: Լ. Աճառյանը իր «Հայոց գրերը» աշխատության մեջ, բերելով ստուգաբանության եղած փորձերը (հայ. մաշաիմ «ճաղատանալ», իրան. mazda «հիշատակ», հուն. μαστός «բարձունք, բլուր» և այլն)¹⁵, իր «Հայոց անձնանունների բառարանում» ստիպված է նշել «ծագումն անհայտ»¹⁶:

Այս անձնանունը կրել են նաև ուրիշ անձինք V դարից առաջ և հետո: Այն հանդիպում է Մաշոնց, Մաշթոնց, Մաշդոնց, Մաթդոնց գրություններով:

¹¹ Բառգրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթությունները Լ. Մ. Ամատունի, Երևան, 1975, էջ 190, 190:

¹² Հմմտ., հատկապես, Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 192:

¹³ Հմմտ. Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 457:

¹⁴ J. Pokorny. Նշվ. աշխ., էջ 743:

¹⁵ Լ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1964:

¹⁶ Լ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 3, 1948, էջ 214:

Իրանագիտական նոր նյութերի հրատարակությունը այժմ հնարավորություն է տալիս որոշելու Մաշտոց անձնանվան աղբյուրը: Բակտրերեն տեքստերում հանդիպում է mašto բառը, որ Վ. Բ. Հենինգը մեկնում է «բեկված» կամ «մեծ» < *masita¹⁷, 2. Հումբախը ճիշտ է համարում միայն երկրորդ մեկնությունը¹⁸, եթե այս բառը կապ ունի Մաշտոցի անվան հետ, ապա իրոք ճիշտ պետք է համարել երկրորդ մեկնությունը և մերժել այդ բառի մեկնության մյուս փորձերը¹⁹, որոնք համար չեն անձնանվան հիմքում ընկնելու համար: Սրան միանում է նաև այն, որ որպես mašto «մեծ» բառի բաղդատական նշվող maštoro = խոսան-սակերեն māstara «ավելի մեծ» (māsta «մեծ») ձևի իրանական մի այլ գուգահեռ կարող էր հիմք լինել հայկական Մաստարս գյուղանվան համար:

Ինչ վերաբերում է Մաշտոց-ի -ոց-ին, ապա այն հանդիպում է նաև այլ հին անձնանուններում՝ Ափոց, Բաբոց, Վարդոց, Տիրոց, Քաղոց:

Պահանջ: Հայ մատենագրության մեջ V դարից ավանդված այս բառը գրեթե առանց իմաստային փոփոխության հասել է մեր օրերը և լայնորեն գործածվում է արդի գրական լեզվում: Հանդիպում է նաև պարսից-ձևով պարսիցի բայի մեջ: Չնայած բառի ակնհայտ իրանական կերպարանքին՝ 2. Աճառյանը (ՀԱԲ, 4, էջ 11—12) այնուամենայնիվ չի ընդունել Ա. Մեյերի վարկածը իրան. pa- նախածանցով (հմտ. պա-կաս, պա-հար) և hanj- արմատով (հմտ. մ. պրսկ., սոգդ. hanj-, հ. պրսկ., ավեստ. θanj- «քաշել») կազմված pa-hanj- ձևից ծագած լինելու մասին²⁰: Մենք pa-ի փոխարեն ենթադրել ենք upa-²¹ Ա. Մեյերի այլևս մեր ստուգաբանության մեջ թույլ կետը (u)pa-նախածանցի (նախարալի) փոխակազմումն է. որ չի բացատրում պարսից-ընթացի ձևը: Այժմ մենք ավելի հավանական ենք համարում վերականգնել par-նախածանցը, որ առկա է իրանական մի քանի կազմություններում (հմտ. մ. պրսկ. parḍač «ընդգրկել», parvar(i)tan «սնել, պահել»): հայերեն պահալ(ը-ի աղբյուր *par-hanj- ձևի գուգահեռն առկա է շուղնանյան parθ-enc- «վրան քաշել (կաշի») կազմության մեջ:

Սարսել, սարսուտ, սարսափել: Գոյություն ունի սարսուտ և սարսափ(ել) բառերի երկու հակադիր մեկնություն. դրանք՝ 1) *սափ ու *սառ արմատների կրկնավոր ձևերն են և կապ չունեն սարսել բայի հիմքի հետ. 2) կազմված են այդ բայի հիմքից -ուտ և -ափ ածանցներով: Երկու դեպքում էլ սկզբնական ձևերը թողնվում են առանց ստուգաբանության: Ճիշտ է վարվում 2. Աճառյանը (ՀԱԲ, 4, էջ 131), որ մերժում է Թրք. sarsmaq «ցնցել» և արաբ. šarsa «սաստիկ և ցրտաշունչ հողմ» բառերի հետ որևէ կապ. երկու դեպքում էլ մենք զործ ունենք պատկերավոր-բնածայնական տիպի կազմությունների հետ:

Պետք է կարծել, որ սարսել-ը և սարսափել-ը նույնպիսի բառակազմական զույգեր են, ինչպես կարելի է փակել, ամրացնել. բերանը փակել, պապանձեցնել» (կարկիլ «պապանձվել, դադարել») և կարկափել «պապանձվել», քարքել և քարքափել «թարթել», այսինքն՝ -ափ-ը սրանց դեպքում հանդես է գալիս որպես ածանց: Սակայն նշենք, որ զարգափ «ցատկոտում», խարխափ «խարխափում», շարշափ «շշունջ, աղմուկ» բառերը չունեն առանց -ափ-ի գուգահեռներ, և նրանց ածանցավոր թե կրկնավոր կազմություններ լինելու

¹⁷ W. B. Henning, The Bactrian inscription, „Bulletin of the School of Oriental Studies“, 1960, v. 23, p. 53, 55).

¹⁸ H. Humbach, Baktrische Sprachdenkmäler, t. 1, Wiesbaden, 1966, S. 97.

¹⁹ Հմտ. G. Djelani Davary, Baktrisch, Heidelberg, 1982.

²⁰ A. Meillet, „Revue des études arméniennes“, 1, Paris, 1921, p. 9; 2, 1922, p. 6.

²¹ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987, էջ 599:

հարցին հնարավոր չէ միանշանակ լուծում տալ: Հ. Աճառյանն էլ տատանվում է, օրինակ, խաղխաղի բառի դեպքում՝ հնարավոր համարելով երկու լուծումն էլ (ՀԱԲ, 2, էջ 346):

Եթե սարսափ բառի դեպքում հարցը լուծվում է հօգուտ նրա ածանցավորության, ապա սարսուռ-ի դեպքում մենք գործ ունենք անհայտ կրկնավորության հետ, մանավանդ որ՝ ա) այն գրվում է նաև երկու ու-ով (սառսուել), և բ) առկա է նաև չհնչյունափոխված սառսառիլ ձևը:

Ե՛վ սարսուռ-ի սառ արմատը, և՛ սարս-ել բայի հիմքը մենք հակված ենք կապելու սառն «սառույց» բառի հետ թե՛ ծագումով, թե՛ նախնական իմաստով: Սարսափել բայը ունի «սաստիկ վախենալ» և «դողալ, սարսուռալ» իմաստները, որոնցից երկրորդը առկա է հատկապես բրբռ. սրսիալ «սարսուռալ» բայի մեջ (հմմտ. բրբռ. սարսուռալ, սոսուռալ): Ստուգաբանորեն սառ և սարս ձևերը կարող են զալ հնդեվրոպական միևնույն *k'ér- արմատի ածանցավոր և աճականական տարբերակներից՝ *k'ér-no- > սառն, *k'ér-sl- > սառ, *kr-k'-(?) > սարս-: Եթե իրող գոյություն ունի սարել «դողալ, կաթականհարել, սարսուռալ» բայը, ապա այն մենք նույնպես կմիացնենք այս խմբին՝ սար- < *k'ér-(?):

Սարաճում: Սարաճում կամ սարաչիմ բայը հանդիպում է հայ մատենագրության մեջ V դարից սկսած: Նրան վերագրվում են «խրտնել, փախչել, բաժանվել» և «խռովել, մեկի դեմ ոխ պահել» իմաստները: Մինչև Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» լույսընծայումը առաջարկված ստուգաբանությունների պատմությունը կարելի է գտնել այդ աշխատության նոր հրատարակության 4-րդ հատորի 192-րդ էջում: Ստուգաբանության հետագա փորձերից է Վ. Պիզանիինը. նա սարաճում-ի արմատը հանգեցնում է հ.-ե *k'ér-d- «սիրտ» արմատին՝ համեմատելով ուս. сердце «բարկանալ» բայի հետ: Այս ստուգաբանությունը որոշ կասկածով ընդունվել է նաև մեր կողմից²²:

Այժմ մեզ հավանական է թվում սարս-ի լիեցումը հ.-ե. *k'ad- «վատ տրամադրություն, հոգս. ատելություն» արմատից ածանցված *k'ad-ro- ձևից: այս ձևի համար հմմտ. ալ. sādra- «տանջանք, երկունք», իմաստով հայերեն բառին մոտ են մ. իռլ. caiss, կիմր., բրետ. cas «ատելություն», կիմր. cawdd «տհաճություն, վիրավորանք. բարկություն», գոթ. hatis «ատելություն, բարկություն», հ. անգլ. hotl «թշնամական», հ. վ. գերմ. hazzōn գերմ. hetzen «հալածել, գրգռել, քշել» և այլն:

Անհավանական չէ կարծել, որ նախնական իմաստն է «խռովել, ոխ պահել», իսկ «խրտնել, փախչել» իմաստը ծագել է ասոր. srd «վախենալ, փախչել» արմատի ազդեցությամբ:

Տրեխ: Այս բառը հայկական աղբյուրներում հանդիպում է IX դարից սկսած՝ նախ առեխաւորիմ «տրեխ հագնել» բայի կազմում, ապա անկախ գործածությամբ: Տարածված է կենտրոնական (Մուշի) և արևելյան բարբառներում:

Հ. Աճառյանը (ՀԱԲ, 4, էջ 435) նշում է արաբ. tīḡāq «կոշիկի կաշի» բառի հետ ունեցած նմանությունը, բայց չի կարողանում որոշել նմանության բնույթը: Ստուգաբանության մյուս փորձերը գիտական արժեքից զուրկ են:

Հ. Աճառյանին հայտնի չի եղել թաթերի լեզվի tīḡax «տրեխ» բառը²³, որ ակնհայտորեն նման է հայերեն բառին և ցույց է տալիս վերջինիս փոխառյալ լինելը: Ցավոք սրտի, թաթերեն բառի ծագումը և արաբերեն հիշյալ բառի հետ նրա հարաբերությունը պարզ չեն: Նախաշեշտ վանկերում հայե-

²² Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 132:

²³ А. А. Грюнберг, Язык азербайджанских татар, Л., 1963, с. 120.

րեն ի-ի անկման ժամանակը Հ. Հյուբշմանը վերագրում է մ. թ. II դ. վերջին և III դ. սկզբին, այնպես որ արեւի բառի փոխառութունը կարող է բավականապես հին լինել:

ЭТИМОЛОГИИ

Г. Б. ДЖАУКЯН
Акад. АН АрмССР

Резюме

В статье дается этимология следующих армянских слов: *gaḡ* «боль, болезнь» (иран.; ср. авест. *gaḡa-* «порча, гибель, беда», др.-инд. *gada-* «болезнь»), *eḷēz* «мокрая земля» (и.-е. **(s)lei-g'h-* от **(s)lei-* «мокрая, скользкая земля»), *kłzi* «остров» (и.-е. **gēlg'hilō-* от **gel-* «сжимать(ся); что-то круглое, шаровидное»), *kokov* «яичко» (и.-е. **geu-* «сгибать»), *hamozel* «убеждать» (ср.-иран. *ham(m)ōz-* основа наст. вр. от *ham(m)oxtan* «учить, поучать, наставлять»), *hptit* «шут» (парф. *herpat* — одно из жреческих званий), *tamsel* «плесневеть» (ср. *tamfel* «замшеть» от *tamur* «мох» < и.-е. **tmusgo-* от **meu-* «влажный; заплесневевший»), *Maštoc* — имя создателя армянского алфавита (иран.; ср. бактр. *masto* < **masita-* «великий» + арм. *-oc*; ср. также название села *Mastara* при хотан.-сакск. *māstara* «большой»), *pa(r)hanl* «требование» (иран. **par-hanl-*), *sarsel* «дрожать, трепетать», *sarsar* «ужас», *sarsur* «озноб, дрожь» (и.-е. **k'eg-*, откуда арм. *sarn* «лед; холодный»), *sartnui* «вспугиваться; обижаться, затаить злобу» (и.-е. **k'ad-go-* от **k'ad-* «дурное настроение; забота, ненависть»), *lrex* «лапоть» (иран.; ср. татск. *tirax* «лапоть, чарык»).